Հայաստանի դիմակայունության եւ աճի ծրագիր

2024թ. ապրիլ

ԵՄ-ն եւ Հայաստանն ուրվագծում են նոր հավակնոտ Գործընկերության օրակարգի իրենց տեսլականը:

Այդ գործընկերության համար որպես հիմք ԵՄ-ն ներկայացնում է **Հայաստանի 2024-2027թթ. դիմակայունության եւ աճի ծրագիրը՝ 270 միլիոն եվրո բյուջեով:**

200 միլիոն եվրո դրամաշնորհային օժանդակություն

70 միլիոն եվրո դրամաշնորհային ֆինանսավորում՝ խթանելու ներդրումները միակցվածության, դիմակայունության եւ բիզնեսի զարգացման ոլորտներում

Դիմակայունության եւ աճի ծրագիրը կենտրոնանալու է հետեւյալ առաջնահերթությունների վրա.

Հայ հասարակության դիմակայունության բարձրացում

- Շարունակել աջակցությունն՝ ուղղված **ժողովրդավարական բարեփոխումներին, մարդու իրավունքներին եւ օրենքի գերակայությանը:**
- Աջակցել **հմտությունների եւ զբաղվածության ոլորտում բարեփոխումներին** եւ ներդրումներին:
- Աջակցել **տեղահանված անձանց երկարաժամկետ ինտեգրմանը՝** ներառյալ բնակարանային եւ զբաղվածության ապահովման հարցերում՝ միջազգային գործընկերների հետ միասին:

Ներդրումներ միակցվածության և կապի ոլորտներում

- Աջակցել Հայաստանի **էներգետիկ ոլորտի դիվերսիֆիկացմանը եւ անվտանգությանը՝ ավելացնելով** վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումները եւ հզորացնելով Վրաստանի հետ հաղորդման ցանցը:
- Մոբիլիզացնել **տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում** ներդրումները՝ զարգացնելու Հայաստանի՝ որպես տարածաշրջանային լոգիստիկ եւ տրանսպորտային հանգույցի դերը:
- Իրականացնել ներդրումներ **գործարարության ոլորտի զարգացման ուղղությամբ՝** նպատակ ունենալով աջակցել նոր շուկաներ մուտք գործել ձգտող տեխնոլոգիական ընկերություններին, ստարտափներին եւ ՓՄՁ-ներին:
- Մոբիլիզացնել Տնտեսական եւ ներդրումային պլանի շրջանակներում միակցվածության ոլորտում ներդրումները եւ աջակցել Հայաստանի մասնակցությանը տարածաշրջանային նախագծերին, մասնավորապես՝ Սևծովյան էլեկտրական մալուխ նախագծին:

Հայաստանը մոտեցնելով Եվրոպային

- Օգնել **կառավարման մարմինների եւ հաստատությունների** հզորացմանը եւ աջակցել կանոնակարգերի համահարթեցմանը փորձագետների ներգրավման եւ տեխնիկական աջակցության միջոցով (ԹԱՅԵՔՍ, Թվինինգ):
- Աջակցել **ավիացիայի ոլորտին եւ միջուկային անվտանգությանը:**
- Խթանել Հայաստանի **արտահանումների դիվերսիֆիկացմանը** եւ նոր շուկաներում հայկական արտադրանքի առաջմղմանը:

© Adobe Stock

© Եվրոպական միություն, 2024
Սույն փաստաթղթի վերաօգտագործումը թույլատրվում է՝ համապատասխան աղբյուրի վկայակոչման եւ կատարված բոլոր փոփոխությունները նշելու պայմանով (Creative Commons հեղինակության վերագրման 4.0 Միջազգային արտոնագիր): ԵՄ-ին չպատկանող տարրերի ցանկացած տեսակի օգտագործման կամ վերարտադրության համար հնարավոր է անհրաժեշտ լինի թույլտվության համար դիմել անմիջապես համապատասխան իրավատիրոջը: Բոլոր պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպական միությանը, եթե այլ բան նշված չէ:

Լյուքսեմբուրգ: Եվրոպական միության հրատարակչական գրասենյակ, 2024

PDF ISBN 978-92-68-14371-1 doi:10.2775/406856 NA-09-24-209-HY-N